ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՑԻՆ ՓԱՓԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պարսկաստանի համար տարեշրջանը 5 ֆր. կամ 2 րբլ. ոս. թղթդրմ.

Սերիւ ամէն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, ամբողջ 9րդ տարեշրջանի (93 օգոստ.—94 մայիս) բաժնորդագինն է 20 ֆր. կանխիկ։ Կարելի է նաեւ բաժնորդագրուիլ քանի ամսի համար ալ որ ուզուի, ամեն մէկ ամսականը 2½ ֆր. հաշուելով և 1894 մայիս ամսէն անդին չանցնելու պայմանով։

Նամակ և ծրար պէտք է ղրկել հեռեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

ԹՈՒ ՏԱՐԻ ԹԻՒ 40

1894 ՓԵՏՐՎԱՐ 7

ՅՈՒՆՎԱՐ 26 (Հ. Տ.)

ՀԱՆԴԷՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ Դ. ԵՒ ԵՐԹ. ՕՐԵՐ

ՊԱՏՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։ Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։ Յանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։ Յանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Allées de Meilhan, 44.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յառջում երկրամի մէջ. — Յառջում կրեռէի մէջ. — Հայեր ի Թիւրքիա. — Ամերիկայի Հայերի Հովիւը. — L'Arménie-Armenia լրագիրը. — Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութիւն. — Նամակ Պարսկաստանէն (Դավրէժ). — Նամակ Աստրախանէն (Մէկսուրն). — Թիւրքիոյ լուրեր. — Ֆրանսա. — Արտասահմանի լուրեր. — Փոխադրութիւններ։

ՅՈՒՋՈՒՄ ԷՐԶՐՈՒՄԻ ՄԷՋ

Կ.Պոլսէն կը գրեն Petit Marseillais լրագրին հետեւեալը զոր բոլորովին վերապահութեամբ միայն կը հրատարակենք։

«Մի ժամանակէ ի վեր Էրզրումի հրշակայները պատահած անկարգութիւնները սոսկալի սովին հետեւանքն են։ Սովատանջ բնակիչները լսումները յարձակեցան խանութներին վրայ և կողոպտեցին։ Շատ հարուստ մահմետականներ սպանուեցան։ Բ. Դրան կառավարութիւնը բազմաթիւ զօրախումբեր ղրկեց կարգապահութիւնը վերահաստատելու համար։ Բայց սովատանջները, որոնց դործը կարելի էր կարգադրել մի քիչ օգնելով իրենց, կապտանան քանդել դիւղերը և կրակի տալ զանոնք։

«Գործերի վիճակը խիստ ծանրացած է։ Կը հաշուեն թէ անօթութենէ մեռնողներուն թիւը 50,000ի կը հասնի։ Աւերակ ընտանիքները մեկտեղ անօթութենէ մեռած գտնուած են իրենց խղճալի խրճիթներուն մէջ։»

ՅՈՒՋՈՒՄ ԿՐԷՏԷԻ ՄԷՋ

Ա.ԹԷՆՔԷՆ կը հեռագրեն փետրվար 3ին։ «Պաշտօնապէս ստացուած վերջին հեռագրալուրերը կիմացունեն որ Կրէտէի մէջ խռովութիւն ծագած է, քրիստոնեայ ժողովուրդներուն մէջ տիրող սաստիկ յուզման պատճառով։ Կերեւի թէ նահանգապետ փաշան վերջերս հրաման տուած էր դէպի տալու չորս քրիստոնեայ բանտարկուածները որոնք գանազան յանցանքներուն համար մահի դատապարտուած էին. շատ մահմետականներ ալ նոյնպէս մահի դատապարտուած էին դատարաններէն, բայց անոնցմէ ոչ մին չգլխատուեցաւ։ Քրիստոնեայ ժողովուրդն ալ փոխարէնը հատուցանել ուզեր է և Սէլինայի մօտերը երկու մահմետականներ կախուած գտնուեր են։ Բազմաթիւ ձերբակալութիւններ եղած են։ Բանեցս գտնուող բոլոր հիւպատոսները բողոքած են քրիստոնեայ բանտարկուածներուն գլխատուելուն դէմ և այդ խնդրով հեռագրած է իւրաքանչիւրն իր կառավարութեան։ Յունական հիւպատոսը կաշխատի ժողովուրդը հանդարտեցնելու։

«Նահանգապետ փաշան այդպէս վարուելը է առանց Կ.Պոլսէն հրաման առնելու։ Կը ցանկայ եղեր որ պաշտօնանկ լինելով Կ.պոլիս երթայ և կասեն թէ այդ նպատակով խռովութիւնները ծագեցունել տուած է կրետէի մէջ։

ՀԱՅԵՐ Ի ԹԻՒՐՔԻԱ

Հանդուցեալ Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանցի կտակով վանի մէջ հաստատուելիք Հիւանդանոցին համար, կեդրոնական Ազգ. վարչութեան կարգադրութեան համեմատ վանի մէջ ալ մի Հոգաբարձութիւն պէտք է ընտրուեր վեց անդամէ բաղկացած որոնց 3ը Սրուանձտեանց Խաչատուր, Յակոբոս և Սիմէոն եղբայրներն եղած են և 3ն ալ վանի Ազգ. վարչութեան խառն ժողովի կողմէն ընտրուեր են Տեարք Մհի. Գրիգոր Տ. Յարութիւնեան, Յովհաննէս Սանթուրճեան և Փանոս Գասպարեան։ Հիւանդանոցին պիտի յատկանայ Յայնկոյսներ թաղի վարժարանը. աշակերտներն արդէն փոխադրուած են մի ուրիշ տան մէջ և վարժարանը Հիւանդանոցի փոխարկելու պատրաստութիւնները կը լինին։

— Ակրի Տիկին Մարիամ Էթիլեան որ մեռեր է Կ.պոլսի մէջ յունուար 14/26ին, Խասգիւղի Ս. Յոհաննոս եկեղեցւոյն կտակեր է Պալըզ փազար ունեցած խանութը և Լէպլեպիճի խանի մէջ ունեցած մէկ սենեակը. երկուքը կարժեն 400 օսմ. ոսկի (9200 ֆր.)։

— Կ.պոլսի Պատրիարքարանը այնչափ խոհեմութիւն ցոյց տուեր է այս անգամ որ վանի առաջնորդ Պօղոս եպիսկոպոսի Ս.ռաջնորդ ընտրուիլը չէ վաւերացուցեր. նոյնպէս և չէ վաւերացուցած վանի փաշայի հրամանագրած Քաղաքական և Կրօնական ժողովներուն ընտրութիւնը։

— Քաղաքական ժողովը յունվար 12/24ին նայեն մէկ նկատելով որ Եզդատի վիճակը զուրկ կը մնայ հովուական խնամքէ և Գատառ. վարչութիւնը անհրաժեշտ պէտք կը յայտնէ հոգեւոր հովուի մը ներկայութեան, պաշտօն յանձնեց կեսարիոյ Առաջնորդ Գեր. Տրդատ վարդապետին առժամանակեայ կերպով երթալ Եղղատ, ժողովուրդը հովուել հոգեւորապէս և ըստ օրինի կատարել տալով առաջնորդի ընտրութիւն՝ տեղեկագիրը ղրկել։

— Գեր. Իզմիրլեան Սրբազան որ մի քանի չաբաթէ ի վեր հիւանդ էր, սկսած է աղէկնալ և ղինք դարմանող բժիշկը, Տօքթ. Սահեան փաշա Ասլանեան, յոյս կուտայ որ քիչ օրէն բոլորովին կառողջանայ։ Նորին Գերապատուութեան ալ բաղուկը բռնուած էր ջղային ծանր յօդատապէ և ոչ միայն բոլորովին թմրած էր, այլ և ընդհանուր մարմնին անհանգստութիւն կը պատճառէր, անքուն թողլով հիւանդը և սաստիկ ցաւեր յառաջ բերելով։

— «Արեւելք»ի յնվ. 17/29ի թուին մէջ կը կարդանք։

Զմշկածագէ գրուած նամակները սրտաշարժ տեղեկութիւններ կուտան այն կողմեր տիրող սովին վրայ, զոր մեր թուրք պաշտօնակիցք եւս մարդասիրաբար յիշած են արդէն։ Թէպետ ընդհանրապէս արեւելեան գաւառաց մէջ այս տարի աւմտեաց նուազութիւն, սղութիւն և հետեւապէս շատ նեղութիւն կը տիրէ, բայց տեղ տեղ, մանաւոր պարագայից բերմամբ, անձկութիւնն եւս առաւել զգալի է։ Օրինակի համար, Զմշկածագ, սաստիկ ձմրան պատճառաւ հաղորդակցութենէ կտրուած, և արդէն աւելի աղքատ, մեծագոյն դժուարութիւն կը կրէ ցորեն կամ ալիւր ընդունելու։ Անօթի մնալով ինքնասպան եղած անձերու անունները թուրք լրագրաց մէջ եւս կարդացած էինք, և Զմշկածագէ գրուած վերջին նամակներ կ'ըսեն թէ այդպիսի դէպքեր վիպական չեն, իրական են և այդ յուսահատական միջոցին դիմողներ հոն ալ տեսնուած են դժբախտապէս։ Մինչեւ իսկ քանի մը ծնողներ, չկրնալով հաց հայթայթել իրենց զաւակներուն, զանոնք դրամի կամ ալիւրի փոխարէն աւելի բարեկեցիկ անձերու թողուլ, այսինքն՝ պարզապէս վաճառել փորձած են, և թէպէտ անհատական պարագայներու մէջ գտնուած են մարդասէր անձինք որք օգնութեան հասած են, բայց արմտեաց սղութեան պատճառած դըժուարութիւնն ընդհանուր է։

Ա.ՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՑԵՐԻ ՀՈՎԻՒԸ

Ա.մերիկայի Հայոց նորընտիր հոգեւոր հովիւ Տէր-Ներսէսեան Ա.րժ. Մաղաքիա վարդապետի պաշտօնին վերաբերեալ հրամանագիրը՝ Պատրիարքարանի թղթերին վրայ՝ Բ. Դրան կողմէ տրուած ըլլալով, Տ. Մաղաքիա վարդապետ ի մօտոյ իւր պաշտօնատեղին պիտի ուղեւորի։

(Արեւելք)

L'ARMÉNIE-ARMENIA
ԼՐԱԳԻՐԸ

Տիար Չերազ իր հրատարակած L'Arménie-Armenia ամսաթերթին մէջ կը յայտարարէ որ անոր չրջաբերութեան աւելի ընդարձակ ասպարէզ տալու համար, տարեկան 15 չիլին բաժնորդագնի փոխարէն որոշած է տարեկան 5 չիլին (6 ֆրանգ) կամ վեցամսեայ 2½ չիլին (3 ֆրանգ) բաժնորդագնով ղրկել թերթին անդիներէն մասը անոնց որոնք կարող չեն տարեկան 15 չիլին (18 ֆր. 75) բաժնորդագին վճարել։ Յուսալի է որ Տիար Չերազի յանձն առած այս նոր գոհողութեան փոխարէն, կարող ազդայիններն ալ իրենց նուիրատուութիւններով կը քաջալերեն և կօգնեն այդ աղգօգուտ թերթի հրատարակութեան։

Տիար Չերազ յայտարարած է նաեւ իր թերթի մէջ թէ Մինչեւ ո՛ր կողմն ալ ուզուի, պատրաստ է ինք երթալ հրապարակախօսութիւններուն հետեւեալ նիւթերուն վրայ։ Ա. Քաղաքական դիրքը Թիւրքիոյ մէջ. Բ. Օսմանեան պետութիւնը. Գ. Հայկական խնդիրը. Դ. Քրիստոնեաներուն եղած հալածանքը. անոր ձեւերն ու գոհերը. Ե. Փաշաներ և դիւանագիներ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱՑՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱՑՈՒՆՔՆԵՐ

Գիրք Ա. Տետր 1

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱՑՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գիրք Ա. Տետր 1

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱՑՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գիրք Ա. Տետր 1

ՎԱՎԱՆԱՎԱՅԻ Ս. ՀԱՅԿԱԶՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԸ

Վանի Ս. Հայկազնյան անվան գիշերային դպրոցի տնօրենությունը հայտնում է, որ 1936-37 ուսումնական տարվա համար ընդունելություն է կատարվում դպրոցի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ դասարանները։

Ընդունելության համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. Ծննդյան վկայական կամ ծնունդը հաստատող այլ փաստաթուղթ։
2. Վերջին դասարանի ավարտական վկայական։
3. Ընտանեկան վկայական։
4. Ազգանունը փոխած լինելու դեպքում՝ համապատասխան փաստաթուղթ։

Ընդունելության համար դիմողները պետք է ներկայանան դպրոցի տնօրենությանը 1936 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 15-ը։

Ընդունելության համար դիմողները պետք է ունենան 16 տարեկանից ոչ պակաս և 30 տարեկանից ոչ ավելի տարիք։

Ընդունելության համար դիմողները պետք է ունենան առնվազն տարրական կրթություն։

Ընդունելության համար դիմողները պետք է ունենան առողջական լավ վիճակ, որը կհաստատվի բժշկական հանձնաժողովի կողմից

Ֆրանսական դեսպաններէն, այցելեցին Միլան թագաւորահայրին։ Պր. Բէբոխանիէն (ռուսական դեսպան) և Պր. Բաթրիմնիօլին (ֆրանսական դեսպան) չայցելելը՝ զանազան մեկնութիւններ տալու տեղի տուած է։

— Իտալական կառավարութիւնը 30,000 ֆր. ղրկեց ֆրանսական կառավարութեան Ճենովաի, Հռովմի և Նափոլիի մէջ պատահած խռովութիւններուն ժամանակ Ֆրանսայիներէն եղած վնասներուն հատուցմանը համար։

— Իտալիոյ մի քանի նահանգներուն մէջ ծագած խռովութիւնները հանդարտեցունելու յաջողեցաւ կառավարութիւնը։ Այսու ամենայնիւ, պաշարման վիճակը բոլորովին վերցուած չէ դեռ։

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Հետեւեալ գիրքերը կարելի է ըստանալ Արմենիոյ խմբագրատունէն իրենց առջեւ նշանակուած գիներով որոնց մէջ հաշուուած է և ղրկելու փոստի ծախքը։

Գործքը կանխիկ վճարուած՝ գիրք ղրկուիր։

ՍՈՒՍԿ. Լիակատար երգարան։ Հրատարակեց Գրիգոր քահանայ Գըրիգորեանց։ Հատոր Ա. Տպագր. Մոսկուա 1890։ (Կը պարունակէ 282 երգեր, ինչպէս հիներէն, նոյնպէս և նոր երգերէն չատեր) 4 ֆրանգ։

ԺՕՐԺ ՍԱՆ — Գարիբալդիի կենսագրութիւնը ,35 սնթմ.։

Րաֆֆի, Արծիւ վասպուրականի (Խրիմեան Հայրիկ)։ 1893 (Էջմիածնի կաթողիկոսութեան և Խրիմեան Հայրիկի մասին Րաֆֆիի գրածներուն մէկ ամփոփումն է։ Սկիզբը գրուած է վեհ. Հայրիկի պատկերը)։

գին	2 ֆր. 45
Րաֆֆի, կայծեր Ա հատոր	7 ֆր.
» , » Բ	8 — 50
» , » վերջը	1 — 75
» , վէպիկներ և պատկերներ Ա	7 —
» , վէպիկներ և պատկերներ Բ	7 —

Հայկակ Էկինեան, Կսկծանք, Տետր Ա., Ն. Երք. 1890 (Հեղինակին ընտիր մէկ բանաստեղծութիւնն է այս արձակ գրուած)։ 30 սնթմ.

Հ. Կղեմէս վ. Սիպիլեան, Դասագործութիւն Ռուբինեան դրամոց (Մէկ լուսանկարատիպ պատկերով, վեց վիմատիպ տախտակօք — 79 պատկեր —, և 53 պատկերօք ի բնագրին, որոց մէջ կան բազմաթիւ չհրատարակեալներ։ Մեծ 8° երես ԺՋ+88+32). Վիէննա 1892։ Գին 7 ֆրանք։

(Ցանկացողին ձրիապէս կը ղրկուի յառաջաբանն ու ներածութիւնը)։

Շիրվանզատէ — Գործակատարի յիշատակարանից (մի պատկեր վաճառականական կեանքից) և հրդեհ Նաւթագործարանում (Բագուի մշակների կեանքից) 1 ֆրանք 75 սնթմ.։

Հ. Բարսեղ Սարգիսեան, Ուսումնասիրութիւն Մանիքէա Պաւղիկեան Թոնրակեցիներու աղանդին և Գր. Նարեկացու Թուղթը (Կրօնական նորելուկ դաղափարների տարածման պատճառով Հայաստանեայց ժողովրդի մէջ ծագած երկարատեւ և մեծ յուզումների մի առանձին ուսումնասիրութիւնն է որի մասին դրուած չկայ Հայոց պատմութեան դասագրքերին մէջ)։

2 ֆր. 20 սնթմ.։

Գիւտ Քահանայ Աղանեանց, Դիւան Հայոց պատմութեան. Գիրք Ա. Բ. 1780-1834. Տպագր. Թիֆլիզ. 1893 (Հայոց ազգի 54 տարու պատմութիւնը կը ներկայացունէ, մանաւորապէս Էջմիածնի գլխէն անցածները, պատմական վաւերաթուղթերով։ Սկիզբը դրուած է կարբեցի Յովհաննէս կաթողիկոսի պատկերը։ Այս աշխատութիւն արժանացած է Սահակ-Մեսրոպեան մրցանակին)։ 7 ֆր.

Կոստանդին Ապրիկեան, Հայրենիքիս դուռս։ Վէպիկ. Հրատարակութիւն Մ. Թարվերդեանի (Մեծատուն բաղդի յոյսերով հայրենիքէն դուրս եկած մի հարուստ գիւղացու պատահած թշուառութիւնները կը նկարագրէ որ հազիւ իր հայրենիք վերադառնալով հոն կրցած է գտնել իր հանգստութիւն)։ 50 սնթմ.

ԾԱԽՈՒ ԳԻՐՔ ԵՒ ՊԱՏԿԵՐ

Հ. Ց. Վ. Իսահէրտենց. Կրթարան անգլիական լեզուի (Անգլիերէն լեզուն դիւրին և գործնական ոճով սովրեցնող քերականութիւն մ'է հրահանգներով մեկտեղ)։ Ա. հատորը կը բաղկանայ 256 երեսէ և Բ հատորը 216 երեսէ. վերջն ալ յաւելուած մը կայ 50 երեսէ բաղկացած որ հայերէն հրահանգներն անգլիերէն թարգմանութիւնն է։ Երկու հատորը միասին՝ 5 ֆր.։ (1 տոլար ամերիկեան)։

Նշանակ Հայաստանեայց. Մայր Հայաստանի պատկերը՝ Հայոց 4 թագաւորութիւնների նշանակներովը մէկտեղ վայլուն թղթի վրայ և կանաչ, կապոյտ և դեղին գոյներով ներկուած։ 1 ֆրանգ։

ԼՈՒՍԻՆԵԱՆ ՕՐԲԱԶԱՆԻ ՊԱՏԿԵՐը

Տաճկական բռնութեան նահատակ եղող խորէն Նարպէյ-Լուսինեան Սբբազանի պատկերը ընտիր թղթի վրայ տպուած կը ծախուի Արմենիոյ խմբագրատունը։ Գինն է 65 սանթիմ, փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

ՀԱՅՈՑ ՀԱՅԲԵՆԱՍԻՐԱՑՈՒՆ
ՄԻՈՒԹԵԱՆ
Ա. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՏՈՒԹԻՒՆ

Բ. Տպագրութիւն

«Հայոց Հայրենասիրական Միութեան» հրատարակած այս վարդապետարանի մէջ հաւատոյ կերպով բացատրուած է թէ իւրաքանչիւր հայ բնատուր հայ ի՛նչ փափաքները պէտք է ունենայ և ի՛նչ պարտքեր ունի կատարելու։

Կը խնդրուի ամեն հայրենասէր հայեր իրենց շրջանի մէջ տարածել այս տետրակ։ Մէկ անգամէն 50 օրինակ ծախու առնողին կը ղրկուի 5 ֆրանքով հատին գինն է 15 սանթիմ (Պարսկաստանի Հայերին համար 10 սանթիմ)։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերին վրայ մանաւոր զեղչ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը ղրկուի փակագծի մէջ նշանակուած գիներով։

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (Սպառած)։
Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԷԼԻ »
Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ԿՆՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍՏԱՄԲԱՊՏԱՑ (Սպառած)

Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(Հայաստանցիների պանդխտութեան տխուր հետեւանքներէն մէկ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ վիպական կերպով։) Գինն (90 սնթմ.) 1 ֆրանգ. 20 սնթմ.

Զ. ԳԱՄԱՌ ՔԱՔԻՈՑ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենաց առարտեղուց (Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաշունչ ընտիր ոտանաւորներէն 3ը՝ առանձին տետրակով հրատարակուած են)։ 50 հատը 2 ֆր. և 50 սանթիմ, հատը (5 սնթմ.) 10 սանթիմ։

Է. ԼԻՆԶԻ ՕՐԷՆԻՔ ՏԱՃԿԱՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ. (Սպառած)

Ը. ԹԻՒՐՔԻԱՒ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ (Թիւրքիոյ Հայերին և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ։ Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ բնակիչներուն թուին բազդատական մէկ ցուցակն ալ կցուած է տետրակին վերջը։) Գինն 50 սանթիմ (35 սանթիմ)։

Թ. «ԱՐՄԷՆԻԱ»Ի ՅՈՒՇԱՐԱՐ (Արմենիոյ Ա. տարեշրջանի թիւերը այժմ բոլորովին սպառած և միեւնոյն ժամանակ չտետրի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանի մէջ Մ. Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն գէթ 30ի չափ ամփոփուած են Յունուարի մէջ որ ուրթածալ գիրքով 124 երեսներէ կը բաղկանայ)։ (1 ֆրանք)։ 1 ֆր. 40 սանթիմ

Ժ. ՎՐԷԺ (Պուլկարիոյ մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Պուլկարներն ի՛նչպիսի մի չոգնեռի դիմած են իրենց վրէժ լուծելու համար)։ (15 սնթիմ) ,20 սնթմ.

ԺԱ. ԹՈՄԱՍ ԲՈՑԱՐԻՍ (Յունաստանի մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւնները մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Յոյներն ի՛նչպիսի մի չոգնեռի դիմած են իրենց վրէժ լուծելու համար), (0,15 սանթիմ) ,20 սանթիմ։

ԺԲ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՆՄՈՅՇՆԵՐ

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ ԳՐԱԾ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԷՆ

Մ. Փորթուգալեանի գրած հայրենասիրական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ իբրեւ նմոյշներ զանազան քաղաքներու մէջ և զանազան տպաւորութիւնները տակի իւրաքանչիւրին գրած ոտանաւորներուն որոնք ժամանակին հրատարակուած չլինելով կորսուած են այժմ։ Այն մի քանի ոտանաւորներ որոնք իբրեւ նմոյշ ամփոփուած են այս տետրակի մէջ, ցիր և ցան կը գտնուին Կ. Պոլիս աշխարհաբար պագրուած ազգային երգարաններուն մէջ՝ որոց վերատին տպագրութիւնն վաղուց արդէն արգիլուած է, և Ասիա և Արմենիա լրագիրներուն մէջ։ Նմոյշներու մէջ փոքրիկ տեղեկութիւններ տրուած են նաեւ թէ այդ ոտանաւորները ի՛նչ տպաւորութիւնների տակ ներշնչուելով գրուած են։ Գինն (10 սանթիմ) 15 սանթիմ։

Ասոնցմէ զատ, Արմենիոյ խմբագրատան մէջ ծախու կը գտնուին նաեւ Հ. Ալիշանի, Հ. Ինճիճեանի, Հ. Գաբրիէլ Զարբհանէլեանի, Րաֆֆիի, Ծերենցի հրատարակուած բոլոր գիրքերն, ինչպէս և ուրիշ օգտակար գիրքեր և քարտէզներ Հայաստանի՝ Հայերէն կամ լատինական տառերով և զանազան գիներով ևլն. ևլն.։

Գրավաճառանոցի ժանրամաս ցուցակը որ 90 երեսներէ կը բաղկանայ, ցանկացողներին կը ղրկուի ձրիապես։

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՕԼՍՈՑ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՆ Ա ԻՆՈՒԱԾ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐԵՑ ԱՊԱՂԱՌԻՊ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացունէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբարոյական մի հայր իւր ապականուած վարքուբարքով որչա՛փ չարիքներու պատճառ դարձած է և վերջէ վերջոյ ինք ալ իւր որդու ձեռքով սպանուած և անհետացած է աշխարհէն։ Գինն 1 ֆրանգ, (75 սանթիմ)։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷԼ

Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie et Papeterie du Midi
Allées de Meilhan, 44.